ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/139

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17675-18 գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 26.09.2018թ. թիվ 1/18-2/56598-18 գրության հիման վրա, 01.10.2018թ. «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 26.09.2018թ. թիվ 1/18-2/56598-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցում ընթացակարգով 2018թ. սեպտեմբերի 7-ին կազմակերպել է ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնման գործընթաց:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն (ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 14.09.2018թ. որոշմամբ ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից) ունեցել է 53.383 ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է թույլատրելի չափը, ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովի 19.09.2018թ. որոշմամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:»:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն կոմիտեի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 02.10.2018թ. գրությամբ դիմել է «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17675-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիք, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17675-18 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.09.2018թ. թիվ 1/18-2/56598-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 14.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 19.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, 13.09.2018թ. դրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.09.2018թ. «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին տրված թիվ 2702 տեղեկանքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.09.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 14.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ.

- որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին:

- որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում կատարել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային

պարտավորությունների և հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պասիվների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.09.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 53.383 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 19.09.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ, հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 13.09.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 53.383 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորություն՝ որոշել է «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա (13.09.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ՝ 53.383 ՀՀ դրամի չափով: Վերոհիշյալ խնդիրը պարզելու նպատակով, Ընկերությունը դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե և խնդրել է տրամադրել տեղեկատվություն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ: Ի պատասխան Ընկերության հարցմանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.09.2018թ. տրված թիվ 2702 տեղեկանքի համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն 13.09.2018թ.դրությամբ ունի 31.383 ՀՀ դրամի հարկային պարտավորություն և 22.000 ՀՀ դրամի դրոշմանիշային վճար: Մինչդեռ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 13.09.2018թ. հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գումարը կազմել է 31.383 ՀՀ դրամ, որը չի գերազանցել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը, իսկ դրոշմանիշային վճարի մասով որևէ նշում չկա,

հետևաբար Ընկերությունը վստահ լինելով, որ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ առկա չեն եղել, հայտ է ներկայացրել՝ առաջնորդվելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալների առկա տեղեկատվությամբ:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 13.09.2018թ. դրությամբ քաղվածքը, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 26.09.2018թ. «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին տրված թիվ 2702 տեղեկանքը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2018/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.
- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված

տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով

սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի կողմից առագարկված գնային առաջարկը կազմել է 4.000.000 ՀՀ դրամ:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.09.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (13.09.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 53.383 ՀՀ դրամ:

- «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 53.383 ՀՀ դրամ արձանագրված ժամկետանց պարտավորության գումարից 22.000 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

- «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի

համաձայն՝ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (13.09.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների գումարը կազմել է 31.383 ՀՀ դրամ, որը չի գերազանցում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, որում արտացոլված չի եղել որևէ տեղեկատվություն դրոշմանիշային վճարի վերաբերյալ:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում 22.000 ՀՀ դրամ գումարի չափով վճարման ենթակա դրոշմանիշների վճարի մասով պարտավորությունը չի կարող դիտարկվել «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (13.09.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.10.2018թ. թիվ 01.1/26-3/17675-18 գրությամբ «Վ ԵՎ Ա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ